

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՄՈՒՐԱԴՅԱՆ ԼՈՒՍՅԱ ԿԱՐԱՊԵՏԻ**

**ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԱՅԼԱԼԵԶՈՒ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՎ ՀԱՄԱԼՐՎԱԾ ԽՄԲԵՐՈՒՄ**

**ԺԳ.00.02 -<<Դաստիարակության և դասավանդման մեթոդիկա >>  
(հայոց լեզու) մասնագիտությամբ մանկավարժական  
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**Երևան – 2019**

Ատենախոսության թեման հաստատվել է ԽՍ. Աբովյանի անվան  
հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների թեկնածու,  
դոցենտ **Ա. Վ. Գալստյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բ. գ. դ. , պրոֆ. Գ. Գ. Գևորգյան  
մ. գ. թ. , դոցենտ Գ. Լ. Խալաթյան

Առաջատար կազմակերպություն՝

Վանաձորի Հովի. Թումանյանի անվան  
պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2019թ. մայիսի 30-ին՝  
ժամը 12-ին, հայկական պետական մանկավարժական համալսարանում  
գործող ՀՀ ԲՈԿ-ի մանկավարժության ԺԳ.00. 02 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծ 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՊՄՀ գիտական գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2019թ. ապրիլի 19-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝



մանկավարժական գիտությունների  
թեկնածու, դոցենտ՝ **Ա. Հ. Սվաջյան**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Հետազոտության արդիականությունը:** Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության կրթական գործընթացները համապատասխանեցվում են եվրոպական կրթական ծրագրերին ու չափորոշիչներին՝ հիմք ընդունելով եվրոպական կրթատարածքի ընդհանուր նպատակներն ու սկզբունքները:

Հայաստանի Հանրապետության տարբեր բուհերում սովորող այլազգի (հատկապես անգլախոս) ուսանողների համար կազմվել են հայերենը որպես օտար լեզու ուսումնասիրելու տարբեր ծրագրեր, մշակվել է մեթոդական գրականություն՝ ուսումնառության ընթացքում հայոց լեզվին տիրապետելու նպատակով: Ուսումնական այս կարևորագույն գործընթացի առաջնահերթ խնդիրը հայկական միջավայրում լեզվական արգելքի հաղթահարումն է: Դրա համար նախևառաջ պետք է ունենալ այլազգիներին հայերեն ուսուցանելու համակարգված ուսումնական ծրագիր, որում պետք է դիտարկվեն՝

ա) գրուսուցման և կարդալու կարողությունների ձևավորման գործընթացի առանձնահատկությունները,

բ) հայերենով հաղորդակցվելու հմտության և ընթերցանության տեխնիկայի ձևավորման մեթոդները,

գ) պարզ տեքստերից աստիճանաբար ավելի բարդ տեքստեր ընթերցելու հմտության ձևավորման հնարավորությունը,

դ) գրավոր խոսքի ձևավորման գործընթացի առանձնահատկությունները,

ե) երկրագիտական ճանաչողական գիտելիքները հայոց լեզվի

ուսումնասիրմանը զուգընթաց ներկայացնելու հնարավորությունները:

Այս կարևորագույն խնդիրների դիտարկմամբ և դրանց լուծմանը միտված գործընթացների բովանդակության մշակմամբ է պայմանավորված մեր հետազոտության արդիականությունը:

**Հետազոտության նպատակն է** այլազգի ուսանողներով համալրված խմբերում հայոց լեզվի՝ իբրև օտար լեզվի ուսուցման ընթացքում մեր կողմից մշակված մեթոդական համալիրի ներդրման արդյունավետության և դասագործընթացին նպաստող ուսուցման առանձնահատկությունների կիրառման առավելության հիմնավորումը:

**Հետազոտության օբյեկտը** այլազգի ուսանողներով համալրված խմբերում հայոց լեզվի՝ իբրև օտար լեզվի ուսուցման գործընթացն է:

**Հետազոտության առարկան** այլազգի ուսանողներով համալրված խմբերում հայոց լեզվի՝ իբրև օտար լեզվի ուսուցման մեթոդական համալիրն է:

**Հետազոտության գիտական վարկածը:** Այլազգի ուսանողներով համալրված խմբերում հայոց լեզվի՝ իբրև օտար լեզվի ուսուցման գործընթացում որոշակի սկզբունքներով ընտրված և փորձարարությամբ հիմնավորված մեր

մշակած դասանյութերը ներդնելու դեպքում առաջադիր հիմնախնդիրը կիրականացվի արդյունավետորեն:

Թեպետ օտարախոսներին հայերեն սովորեցնելու համար կան տպագրված հաջողված ձեռնարկներ (Պ. Բեդիրյան <<Հայոց լեզվի դասագիրք>>, Ա. Ղարիբյան և Զ. Ղարիբյան <<Հայոց լեզվի համառոտ դասընթաց>>, Լ. Մաքսուդյան, Մ. Կիրակոսյան <<Հայերենի ինքնուսույց>>, Ն. Պառնասյան, Ժ. Մանուկյան <<Ժամանակակից հայոց լեզվի ինքնուսույց>>), սակայն նախատեսված չեն անգլախոսների համար: Վ. Գևորգյանի <<Հայոց լեզվի դասընթացը>> նախատեսված է անգլախոսների համար, բայց ինքնուսույցի արժեք ունի, իսկ Դ. Սաքայանի <<Արևելահայերենը անգլախոս աշխարհի համար զուգադրական մոտեցմամբ>> ուսումնասիրությունը նպատակահարմար է հայերենի խորացված ուսումնասիրության համար:

#### **Հետազոտության խնդիրները.**

- Որոշել ուսուցման յուրաքանչյուր փուլի խնդիրները, մշակել դրանց յուրացման արդյունավետությանը նպաստող ուղիներ ու եղանակներ:
- Վերլուծել այլազգի ուսանողներով համալրված խմբերում հայոց լեզվի՝ իբրև օտար լեզվի ուսուցման արդյունավետությանը նպաստող հոգեբանական և մանկավարժական մեթոդական հնարները:
- Մշակել առաջադիր խնդրի լուծմանը նպաստող ընդհանուր մեթոդական, դիդակտիկական և տեխնոլոգիական համակարգ:
- Փորձարկել և ներդնել մեր կողմից ստեղծված ուսումնամեթոդական համալիր և դրան ուղեկցող մեթոդական ցուցումներ:

#### **Հետազոտության գիտական նորույթը և տեսական նշանակությունը:**

- Հայոց լեզվի մեթոդիկայում առաջին անգամ դիտարկվել է այլազգի ուսանողներով համալրված խմբերում հայոց լեզվի՝ իբրև օտար լեզվի ուսուցման **ծրագիր-դասագիրք-պրակտիկ հնարավորություններ** համակարգը:
- Մշակվել են այլազգի ուսանողների՝ հայերենի՝ իբրև օտար լեզվի բառապաշարի հարստացման, տարբեր փուլերում խոսքի զարգացման գործնականորեն փորձարկված և գիտականորեն հիմնավորված մանկավարժամեթոդական երաշխավորություններ:
- Ներկայացվել են այլազգի ուսանողներով համալրված խմբերում հայոց լեզվի՝ իբրև օտար լեզվի ուսուցման հոգեբանական, լեզվաբանական, մանկավարժական, մեթոդական արդյունավետ հնարներ:

#### **Հետազոտության գործնական նշանակությունը:**

- Այլազգի ուսանողներով համալրված խմբերում հայոց լեզվի՝ իբրև օտար լեզվի ուսուցման արդյունավետությունն ապահովելու նպատակով մշակված և փորձարկված ուսումնամեթոդական համալիրն ու երաշխավորությունները կարող են օգտագործվել սեմինարների, հատուկ դասընթացների ընթացքում, ինչպես նաև՝ ուսումնամեթոդական ձեռնարկների կազմման հիմքում:

• Մեր կողմից ստեղծված և գիտականորեն հիմնավորված մանկավարժամեթոդական երաշխավորությունները կարող են կիրառվել այլազգի ուսանողներին հայոց լեզու ուսուցանելու գործընթացում:

**Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Հավելվածում ներկայացված են մեր կողմից կազմված <<Հայոց լեզվի արագացված ուսուցում>> դասընթացի ծրագիրը արևելահայերեն թերի իմացող օտարախոս խմբերի համար, ինչպես նաև <<Հայոց լեզվի արագացված ուսուցում>> դասընթացի ծրագիրը արևելահայերեն չիմացող օտարախոսների համար: Ատենախոսության ծավալը առանց հավելվածի կազմում է 177 էջ:

Գործածության մեջ են ԿԳ ազգային ինստիտուտի կողմից իբրև դասագիրք հաստատված մեր հեղինակած <<Սովորում ենք գրել, կարդալ, խոսել հայերեն>> և այլլեզու ուսանողների խոսքի զարգացմանը նպաստող երկու ձեռնարկ, հայերենի՝ իբրև օտար լեզվի ուսուցմանը վերաբերող մի շարք աղյուսակներ, տեսալսողական զննական նյութեր, այլ պարագաներ, որոնք փորձարկվել են տարբեր ազգերի ուսանողների հետ Երևանի պետական բժշկական համալսարանի արտասահմանցի ուսանողների լեզուների ամբիոնում (2001-2007թթ.), <<Լինգվաֆորում>>, <<Լազարյան դպրատուն>> և <<Ալյանս դե ֆրանսես>> լեզվի կենտրոններում (2007-2017թթ.), Երևանի <<Հայբուսակ>> համալսարանում (2009-2018թթ.), (տե՛ս մատյանները):

## **ԱՏԵՆԱՒՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ներածության մեջ հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիրները, վարկածը, ներկայացվել են գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները, արտասահմանցի ուսանողների հետ տարվող լեզվական քաղաքականության վերաբերյալ դիտարկումներ:

Հայաստանի Հանրապետության պետականության կայացմանն ու ամրապնդմանը զուգընթաց գործուն քայլեր են ձեռնարկվում ինտեգրվելու աշխարհի և մասնավորապես Եվրոպայի կրթական ծրագրերին, մեծ ջանքեր են գործադրվում միացյալ կրթատարածքի ստեղծման ուղղությամբ: Բոլորնիայի հոշակագրի հիմնական սկզբունքներից մեկը ենթադրում է սովորողների շարժունակության հնարավորություն Եվրոպական միասնական կրթատարածքում: Եթե Խորհրդային Հայաստանում ուսանում էին հիմնականում օտարերկրացիներ Սիրիայից, Լիբանանից, ապա վերջին տասնհինգ տարիներին օտարերկրյա ուսանողների աշխարհագրությունն ընդլայնվել է.

այսօր արդեն մեծաքանակ ուսանողներ են ժամանում Հնդկաստանից, Պարսկաստանից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Չինաստանից, Լեհաստանից, Սերբիայից, Իսրայելից, Իրաքից և այլ երկրներից: Միացյալ եվրոպական կրթական տարածքի ստեղծումը ենթադրում է կրթական ազգային ծրագրերի համապատասխանեցում եվրոպական կրթակարգի գործող չափորոշիչներին: Բնականաբար պարտադրված են և՛ խիստ արդիական ուսումնական նոր ծրագրերի ստեղծումը, և՛ ուսուցման մեթոդաբանության մշակումը: Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը հայտնվել է զարգացման այնպիսի փուլում, երբ փորձ է արվում աշխարհի կրթական մարտահրավերների և մեր ազգային առանձնահատկությունների համադրմամբ ստեղծել նոր կրթական միջավայր: Հաշվի առնելով այն, որ Հայաստանի Հանրապետությունը գտնվում է հետխորհրդային տարածաշրջանում և կուտակել է կրթական երկարամյա ավանդույթներ՝ անհրաժեշտ է խորհրդային շրջանի գիտամեթոդաբանական հենքը համայրել աշխարհում, մասնավորաբար Արևմուտքում ստեղծված կրթական էական նշանակություն ունեցող զարգացումներով: Հակառակ տրամաբանությամբ առաջնորդվելով, այսինքն՝ դրանցից որևէ մեկը բացառելով՝ մենք կհայտնվենք ինքնաբերաբար պատճենողի կարգավիճակում՝ զերծ մնալով ազգային արժեհամակարգի ու առանձնահատկությունների առաջնահերթությանը համահունչ ստեղծարար կրթական ծրագրերից: Այսպիսով, համամարդկային և ազգային արժեքների համատեղելիության գիտակցությամբ կարող ենք հաղթահարել կրթական ռազմավարական գերակայությունների իրագործման առջև ծառայած արգելքները: Ուստի կրթական հիմնարար բարեփոխումների ճանապարհին հնի ու նորի համեմատումն ու համադրումը մեթոդաբանական առումով լուրջ ուսումնասիրման կարիք ունի: Անառարկելի է, որ օտարերկրացիներին հայերեն ուսուցանելուն միտված ուսումնական գործընթացի կազմակերպման առաջնահերթ խնդիրը լեզվական արգելքի հաղթահարումն է, որը ենթադրում է համակարգված ուսումնական ծրագրերի և մեթոդիկաների առկայություն:

Ատենախոսության առաջին՝ «<Հայոց լեզվի՝ իբրև օտար լեզվի դասագործընթացի կազմակերպման առանձնահատկությունները>> գլխում ներկայացվել են փորձաքննության վայրն ու ժամանակահատվածը, հայոց լեզվի՝ իբրև օտար լեզվի դասագործընթացի կազմակերպման առանձնահատկությունները, ընթերցողական կարողությունների զարգացման մեթոդիկան:

Այլալեզու ուսանողներին հայերենի ուսուցման գործընթացը նպատակին ծառայեցնելու համար նշված ծրագրի բաղադրիչների մեջ պետք է ներառել ինչպես գրաճանաչության, այնպես էլ կարդալու և հայերենով հաղորդակցվելու հմտությունների ձևավորումը: Կարևոր են նաև գրավոր խոսքի առանձնահատկությունների իմացությունը և այլ բաղկացուցիչ բաղադրիչներ՝

ընթացանության նյութերի միջոցով երկրագիտական ճանաչողական համակարգված գիտելիքների ուսումնասիրումը, կարդացած խոսքաշարը (նաև գիտական) հասկանալու և հաղորդելու կարողության ձևավորումը և այլն:

Հետազոտության 1.2 ենթագլխում, որն անվանվում է <<Փորձարարության վայրը, օբյեկտները և փորձարարության արդյունքում կատարված ընդհանրացումները>>, համապատասխանաբար ներկայացվում են վերոգրյալները: Մեր բազմամյա մանկավարժական աշխատանքային գործունեության, ինչպես նաև հատուկ նպատակով իրականացրած ուսումնասիրությունների ընթացքում այլալեզու ուսանողների համար ստեղծել ենք անհատական ուսումնական նյութերի համալիր և փորձարկել տարբեր ուսումնական հաստատություններում ու լեզուների ուսուցման կենտրոններում: Որևէ լեզու սովորեցնելու համաշխարհային պրակտիկայի և այդ ուղղությամբ առկա փորձի ուսումնասիրությունը մեզ հնարավորություն են տվել կատարելու որոշակի ընդհանրացումներ և դրանց հիման վրա մշակելու հայերենի՝ իբրև օտար լեզվի ուսուցման գործընթացն առավել արդյունավետ դարձնելու ուղիներ: Արտասահմանցի ուսանողների համար մեր մշակած հայերենի ուսումնական ծրագիրը (տե՛ս հավելվածը) հարմարեցված է ՀՀ կրթակարգի պահանջներին և հայերենի համար ծրագրով նախատեսված ժամաքանակին:

Մեր հետազոտության առաջադիր խնդիրը **որոշակի ժամանակահատվածում** այլալեզու ուսանողներով համալրված խմբերում հայերենի ուսուցման առավել ընդարձակ ծրագրային նյութի ուսուցումն է և նկատելի արդյունքների արձանագրումը. դիցուք՝ **32 դասաժամում** ձևավորել հայերեն գրելու, կարդալու և նվազագույն հաղորդակցություն ապահովելու կարողություններ: Այդ իսկ նպատակով մենք ստեղծել և տարիների ընթացքում մշակել ենք մեթոդական համալիր երաշխավորություններ և փորձարարությամբ հիմնավորել մեր առաջադիր հիմնախնդրի արդյունավետությունը:


Հետազոտությունն իրականացնելիս մեր առջև խնդիր ենք դրել մշակել այն դասանյութերը և դրանց հիման վրա նախանշված ծրագրերը, որոնցով այլալեզու ուսանողներին հայերենը՝ իբրև օտար լեզու դասավանդելիս հնարավոր է հասնել լավ արդյունքների: Հետազոտության ընթացքում փորձել ենք բացահայտել հայոց լեզվի՝ իբրև օտար լեզվի ուսուցման առանձնահատկությունները, համակարգել դասագործընթացի կառուցվածքը, բովանդակությունը, հանդիպող օրինաչափությունների, որոշ մեթոդների կիրառման անհրաժեշտության և որոշ մեթոդների կիրառման բացառման սկզբունքների մշակումը, այլախոս ուսանողների գիտելիքների ստացման արդյունավետ եղանակները, նորագույն տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները: Հետազոտության ընթացքում կատարված մշակումների հիման վրա մեր կողմից ստեղծվել է <<Սովորում ենք գրել, կարդալ, խոսել հայերեն>> ուսումնական ձեռնարկը: Հետազոտության մտահղացումը թելադրել է դրա իրականացման

ուսումնասիրությունը: Համադրել ենք հետազոտվող գործընթացի առկա պրակտիկական և մեր փորձը: Աշխատանքային պլան-գրքույկում կատարվել են նշումներ հետազոտությանը մասնակցած ուսանողների թվաքանակի, ազգության, խմբերի միատարր կամ բազմատարր լինելու, տվյալ օրվա դասանյութի, գիտելիքների յուրացման չափերի և, ըստ այդմ, ստացած գնահատականների վերաբերյալ (տե՛ս մատյանները և աշխատանքային պլան-գրքույկը): Ստացված արդյունքների մոդելավորումը թույլ է տվել դասագործընթացը բաժանել փուլերի: Աշխատանքների տրամաբանական հաջորդականության արդյունքում ստեղծել ենք հայոց լեզվի՝ իբրև օտար լեզվի ուսուցման մեթոդական համալիր՝ ուսուցման տարբեր փուլերի ծրագրեր, դասագիրք, ձեռնարկներ, լատեստոդական ու զննական պարագաներ: Փորձարարությամբ կուտակված փաստական նյութի հիման վրա առաջադրել ենք վարկած, ըստ որի՝ այլալեզու ուսանողներին մեր կողմից առաջարկվող ծրագիր-դասագիրք-զննական և նորարարական տեխնոլոգիաներ շրջան (3 փուլ՝ 32-ական դասաժամով) ապահովում է գիտելիքների անհրաժեշտ քանակ: Կիրառելով ինդուկցիայի և դեդուկցիայի մեթոդները՝ դասանյութերի ընտրությունը, ձևափոխությունը համապատասխանեցրել ենք այլազգի ուսանողների ընկալման և յուրացման հնարավորություններին:

Համալսարանների և լեզվի կենտրոնների տնօրենության կողմից կատարված դասալսումների և դրանց արդյունքների՝ որպես հայերենի՝ իբրև օտար լեզվի դասավանդման արդյունավետության բարձրացմանը միտված հետազոտության գործիք, կիրառումից պարզվել է, որ


- ա. ուսուցման առաջին փուլի ավարտին (32 դասաժամ) այլալեզու բոլոր ուսանողները տառաճանաչ են եղել, կարողացել են գրել, կարդալ, նախանշված չափով հաղորդակցվել հայերենով,
- բ. տարբեր խմբերում ակնբախ տարբերություններ են նկատվել ուսանողների գիտելիքների յուրացման առումով. որքան փոքրաթիվ են խմբերը, այնքան բարձր է առաջադիմությունը (մինչև 15 ուսանող),
- գ. հարևան ժողովուրդներն ավելի հեշտ են յուրացնում դասավանդվող նյութը (զճապատկեր 1).

- 1-ին սյունակ - պարսիկներ, քրդեր, թուրքեր,
- 2-րդ սյունակ - հնդիկներ,
- 3-րդ սյունակ - ամերիկացիներ, նորվեգացիներ, ավստրալացիներ, լեհեր,
- 4-րդ սյունակ - ֆրանսիացիներ,
- 5-րդ սյունակ - արաբներ, չինացիներ,



գժապատկեր 1

դ. ուսանողների մեծ մասը դրական կրեդիտներ է հավաքում (գժապատկեր 2):



գժապատկեր 2

Նշելի է հայերենի՝ իբրև օտար լեզվի դասավանդման ընթացում **խմբային դաս** անցկացնելու գերակա առավելությունը.

- ա. խմբի բոլոր անդամները ներգրավված են եղել դասագործընթացում,
- բ. դասը կառուցվել է ուսանողահեն մեթոդներով, մրցակցային պայմաններում, որպեսզի անտարբեր ուսանող չլինի, մեծանա ուսանողների հետաքրքրությունը և ոգևորությունը դասի հանդեպ: Խմբային աշխատանքը ոչ թե ձևական բնույթ է կրել, այլ ուսանողներն ակտիվորեն մասնակցել են դասի համարյա բոլոր փուլերին: Ուժեղների նկատմամբ առաջ են բերվել նախանձախնդրություն, նրանց հասնելու ձգտում և նրանց հետ դասապատրաստման ընթացքում համագործակցելու ցանկություն,

գ. ընկալման տարբեր աստիճաններ դրսևորելու դեպքում ուսանողներին տրվել է անհատական բացատրություն,

դ. խմբային դասագործընթացի ավարտին իրագործվել է դասի նպատակը՝ տվյալ դասանյութի ըմբռնումը, յուրացումը:

Անգլախոս ուսանողներին արդյունավետ կերպով հայերեն դասավանդելու մեթոդական փնտրտուքները հիմնականում ունեն երեք ուղղվածություն.

ա) օտարերկրացի ուսանողներին նախապատրաստել հայկական լեզվական միջավայրին ինտեգրվելուն,

բ) օտարերկրացի ուսանողներին նախապատրաստել հայերենով մասնագիտական կրթություն ստանալուն,

գ) հայերեն ուսումնասիրել ցանկացողներին ապահովել համապատասխան գիտելիքներով:

Հայերենի՝ իբրև օտար լեզվի ուսումնասիրության գործընթացն իրականացվում է հիմնական որակական սկզբունքներով ու գործնական եղանակներով, որոնցից շատերը համընդհանուր են այլ օտար լեզուների դասավանդման առումով և շատ տարածված ու ընդունված են մանկավարժության մեջ.

1. կառուցվածքային-լեզվաբանական,

2. իմացական,

3. միջանձնային փոխազդեցության,

4. կիրառական-հաղորդակցական:

Կառուցվածքային-լեզվաբանական ուղղությանը մեծ տեղ հատկացնելով՝ ավելի շատ սովորեցնում ենք տվյալ լեզվի պատմությունը, քան բուն լեզվական իրողությունները: Այստեղ, ըստ էության, հետին պլան են մղվում գործնական-կիրառական հմտությունները:

Իմացական ուղղության հիմքում ընկած են ուսուցման այն մեթոդները, որոնք հատուկ են համարյա բոլոր օտար լեզուների ուսուցման մեթոդիկաներին: Դրանք, հենվելով հիշողության վրա, ձևավորում են ունակություններ՝ ըստ սովորողի պահանջումների կամ խմբի առջև դրված առանձնահատուկ խնդիրների:

Միջանձնային փոխազդեցության ուղղությանը հարող մեթոդները հենվում են սովորողի և սովորեցնողի տարիքային, անհատական ֆիզիոլոգիական, զգայական տարբերությունների, առանձնահատկությունների վրա և ըստ այդմ ենթադրում են հարաբերությունների կառուցումը՝ հիմնված ընդհանուր մանկավարժության և տարիքային հոգեբանության վրա: Այս ուղղությունը կարևորում է օտար լեզու սովորելու համար անկաշկանդ միջավայր ստեղծելու անհրաժեշտությունը:

Կիրառական-հաղորդակցական ուղղությունը հենվում է հաղորդակցական գործառույթի վրա և անհրաժեշտ է համարում անկախ տվյալ տարածաշրջանում

գերիշխող լեզվական միջավայրից՝ անընդհատ կիրառելի դարձնել ուսուցանվող լեզուն: Հայերենը՝ որպես օտար լեզու ուսուցանելիս Հայաստանում գերիշխող լեզվական միջավայրն ու յուրացվելիք լեզուն համընկնում են, և սա նոր լեզու սովորելու և սովորեցնելու գործում շատ նպաստավոր գործոն է, ուստի համապատասխան ծրագիր ունենալու դեպքում կարելի է ապահովել լավագույն արդյունքներ: Այլախոս ուսանողներին դասավանդողը պետք է ելակետ ունենա մի քանի կարևոր հանգամանքներ.

1. ո՞ր երկրից են ուսանողները,
2. ի՞նչ ազգության են ուսանողները,
3. ինչպիսի՞ խմբի հետ է աշխատում (խառնը, թե՞ միատարր),
4. գիտելիքների ինչպիսի՞ պաշար են կուտակել նախորդ տարում (եթե ուսանել են),
5. ո՞րն է տվյալ դասի նպատակը,
6. ի՞նչ հիմնախնդիր ունի դասավանդողը դասագործընթացում:

Աշխարհագրական տարբեր միջավայրերից եկած ուսանողներն ունեն տարբեր լեզվարտասանական ապարատ: Նկատի ունենալով այս հանգամանքը՝ դասախոսը զանազան հնչական վարժություններ պետք է կազմի: Անհրաժեշտ է առաջին իսկ դասին, երբ սովորեցնում ենք <<Ռ՛վ եք դուք ազգությամբ>> հարցը և դրա հնարավոր պատասխանները, պարզել ուսանողի ազգությունը և, նախապես ծանոթ լինելով նրա մայրենի լեզվի հիմնական օրինաչափություններին, հետագայում զուգահեռներ անցկացնել այս կամ այն քերականական նյութը բացատրելիս: Նշենք, որ դասը միատարր խմբերում անցկացնելը շատ նպատակահարմար է և ավելի արդյունավետ, սակայն երբեմն խումբը համալրվում է տարբեր ազգությունների պատկանող ուսանողներով: Տվյալ դեպքում դասավանդողից պահանջվում են լրացուցիչ հմտություններ խմբային մտածողություն ձևավորելու, խմբային աշխատանքները կազմակերպելու համար:

Եվրախորհրդի <<Լեզուների իմացության / իրազեկության համաեվրոպական համակարգ. ուսումնառություն, դասավանդում, գնահատում>> փաստաթղթում<sup>1</sup> դիտարկվում են ժողովրդական քաղաքացիության հասարակական միասնության համար անհրաժեշտ լեզվական կոմպետենցիաները, նշվում է, որ այդպիսի կարողությունների զարգացմանն օժանդակող ազգային քաղաքականությունը պահանջում է ուսումնական ծրագրերի միասնականություն և թափանցիկություն, ինչպես նաև դասանյութերի համապատասխանությունը գիտելիքների ամփոփմանը: Այս

<sup>1</sup> . <<Լեզուների իմացության / իրազեկության համաեվրոպական համակարգ. Ուսումնառություն, դասավանդում, գնահատում>> փաստաթուղթ, Երևան 2005 թ., էջ 5:

համակարգն առաջարկում է ընդհանուր չափորոշիչներ, որոնց նպատակն է աջակցել ուսումնական ծրագրեր մշակողներին, դասագրքերի հեղինակներին, քննող մարմիններին և ուսուցիչ վերապատրաստողներին: Այն համապարփակ նկարագրում է, թե լեզու սովորողներն ի՞նչ պետք է յուրացնեն հաղորդակցվելու համար և ինչպիսի՞ գիտելիքներ, ունակություններ պետք է ունենան արդյունավետ գործելու համար: Մեր պարագայում առավելաբար անհրաժեշտ է կիրառել այնպիսի մեթոդներ, որոնք կնպաստեն **կարճաժամկետ ուսուցման փուլերին**: Դասի բովանդակությունը կառուցելիս հարկավոր է մի դասանյութից մյուսին անցումը ճկունությամբ կազմակերպել և հարցադրումներն այնպես կազմել, որ դրանք բավարարեն **խմբային աշխատանքի պահանջները**: Խմբային պարապմունքների ընթացքում կարևոր հանգամանքներ են ուսանողների **խոցելիության նվազեցումը, սթրեսների, տագնապայնության պակասեցումը**, անհրաժեշտության դեպքում առավել աշխատասերին, հետաքրքրասերին, մրցունակին **գովասանքի արժանացնելը**: Դասավանդողը հնարավորինս պետք է քիչ օգտվի **միջնորդ լեզվի օժանդակությունից**:

Ատենախոսության երկրորդ գլխում, որն անվանվում է <<Խոսքի զարգացման ուղիները>>, ներկայացվում են բառապաշարի հարստացման առանձնահատկությունները, բառային և բառարանային աշխատանքների իրականացման մեթոդները, քերականության ուսուցման առանձնահատկությունները:

Ուսուցման սկզբնական փուլում օտարալեզու ուսանողը բառերի ընտրության մեջ ազատ չէ. նրա բառապաշարը սահմանափակ է (այն դաս առ դաս է ընդլայնվում): Արտաքին խոսքը հենվում է կաղապարային նմուշների, յուրացրած կայուն բառակապակցությունների վրա: Դասընթացի առաջին փորձարարական նյութը եղել է **կաղապարային հարցաշարի** կազմումը: Կաղապարային նախադասությունները կամաց-կամաց պետք է ընդարձակել՝ ընդգրկելով ածականներ ու մակբայներ, որոնք օրեր անց դառնում են փոքրածավալ կապակցված խոսք: Այլալեզու ուսանողը թեմայի վերաբերյալ իր մայրենի լեզվով կատարած նախնական դատողությունները փոխարկում է այլ լեզվի, այս դեպքում հայերենով արտահայտված արտաքին խոսքի, և նոր լեզվի յուրացման ընթացքում ծագած ներքին պայքարը վերածվում է հաղթանակի, որը թե՛ ուսանողի, թե՛ նրան դասավանդողի հաղթանակն է: **Թեմատիկ բառաշարերը** կազմելիս առաջնությունը պետք է տալ ուսանողների կենցաղում մեծ անհրաժեշտություն ներկայացնող բառախմբերին, օրինակ՝ <<Ընտանիք>> թեմայի գործուն բառաշարի մեջ կընդգրկվեն **հայր, մայր, քույր, եղբայր, տատիկ, պապիկ, ընտանիք** բառերը: Գործուն բառաշարեր պետք է կազմել նաև ըստ քերականական դասանյութի, օրինակ՝ **լավ – վատ, մեծ – փոքր, նոր – հին, կամ՝ հիմա – հետո, արագ – դանդաղ, աջ – ձախ** և այլն:

Ներկայումս անհրաժեշտ գիտակրթական մակարդակ ապահովելու համար մեթոդաբանական փոփոխությունների մեջ ենթադրվում է նաև **բարձր տեխնոլոգիաների ներմուծումը** հայերենի դասագործընթաց:

Հայերենի՝ որպես օտար լեզվի ուսուցման աշխատանքային մեկ այլ տեսակ է սովորողների կողմից կատարվող **թարգմանությունը**: Հայտնի է, որ պատմականորեն օտար լեզու սովորեցնելիս թարգմանությունը մեթոդ է համարվել և կիրառվել է դեռևս հինգերորդ դարում, երբ հայ լավագույն սաները օտար դիվաններում ուսանում էին օտար լեզուներ և Հայաստան գալով՝ այս մեթոդն օգտագործում էին հայերեն գիրը սովորեցնելիս՝ օտար նյութերը թարգմանաբար փոխադրելով հայերենի: Այս մեթոդը կիրառել են մինչև մեր օրերը, և ներկայումս էլ այն գործադրվում է ժամանակակից լեզուներ սովորեցնելիս: **Շարադրանքը** ևս մեծ տեղ է գրավում բանավոր խոսքի մշակմանն ուղղված աշխատանքների ծիրում: Սակայն սա մեծ հասկացություն է, ուստի ուսանողների հետ այս նյութին պետք է անդրադառնալ գործնական նկատառումով, խոսքաստեղծմանը և խոսքակառուցմանն ուղղակիորեն նպաստելու առումով, ինչպես ընկերօջը **բնութագրելու**, քաղաքը, փողոցը **նկարագրելու** համար անհրաժեշտ խոսքաշար ստեղծելուն միտված աշխատանքներում:

Դասավանդման կարևոր բաղադրիչներ են **ստուգումն ու ամփոփումը**: **Թեստային** աշխատանքներն իրականում **կիրառական վարժություններ** են, որոնք պետք է կիրառել որևէ ենթաթեմայի, թեմայի, կիսամյակի ավարտից հետո: Նման բնույթի վարժություններ հանձնարարելով՝ նպատակ ունենք ստուգել, թե որքանո՞վ է յուրացվել անցած նյութը: **Գնահատումը** մեր կողմից դիտվում է ավելի շատ ոգևորելու, խրախուսելու միջոց: Բացթողումների դեպքում սովորողն ունի **հետագայում լրացնելու հնարավորություն**: **Ուսանող-դասախոս փոխերգործման** մեթոդի դրական արգասիքը երկուստեք նոր որակների ձեռքբերումն է: Մենք առաջարկում ենք ուսանող-դասախոս **գիտելիքահեն և անձնակենտրոն միջանձնային համագործակցություն**՝ հօգուտ ուսանողի:

Արտասահմանցի ուսանողների հետ աշխատելիս մենք խիստ տարանջատում չենք դնում գրաճանաչության այբբենական շրջանի և հետայբբենական շրջանի միջև: Հնչյուն-տառերի ուսուցմանը զուգահեռ մենք ուսուցանում ենք բանավոր խոսք. ինչպես՝ ի՞նչ է իմ անուն-ազգանուն-հայրանունը, ո՞վ եմ ես, որտեղի՞ց եմ եկել, ի՞նչ եմ ուզում դառնալ, որտե՞ղ եմ սովորում, որտե՞ղ եմ ապրում, ո՞վ է իմ ընկերը, քանի՞ տարեկան եմ ես, քանի՞ տարեկան է իմ ընկերը, և այսպես շարունակ:

Առաջին երկու դասերի ընթացքում ուսումնասիրվում են գործածության հաճախականություն ունեցող Ա, Ս, Ր, Ու, Ն, Կ, Է, Ի, Տ, Մ, Ը հնչյուն-տառերը, որից հետո անմիջապես սկսում ենք սովորեցնել վերը նշված հարցերին

վերաբերող փոքրածավալ և պարզագույն տեքստեր: Հնարավոր է, որ դրանցում լինեն 1-2 անձանոթ հնչյուն-տառեր: Ուսուցման գլոբալ մեթոդը կիրառելով՝ անվանում ենք համապատասխան հնչյուն-տառերը՝ ավելի խոր բացատրությունները հետաձգելով համապատասխան դասաժամին: Տեքստերին հաջորդող առաջադրանքների միջոցով ամրակայվում են հոգնակի թվի կազմության, սեռական հոլովի ներքին և արտաքին հոլովումների, հականիշ, հոմանիշ բառերի և ընդհանրապես բառակազմական վերլուծությանն առնչվող գիտելիքները: Դասագործընթացի համակարգված դասդասումը ուսումնական գործընթացին յուրատեսակ կանոնավորություն է հաղորդում, իսկ սովորողների մոտ ուսումնական-աշխատանքային կարգապահություն ստեղծում: <<Մեթոդիկայի պատմության մեջ հայտնի են օտար լեզուների քերականության դերի ու տեղի մասին տարբեր մոտեցումներ, որոնց բազմազանությունը փաստորեն պայմանավորված է երկու հիմնական գործոններով.

ա. քերականության ուսուցումը դիտվում է որպես **ինքնանպատակ (քերականական-թարգմանական մեթոդ)**,

բ. քերականությունը **դուրս է մղվում (ուղիղ մեթոդ)** լեզուների դասավանդման պրոցեսից: Առաջարկվում է օտար լեզուների ուսուցումը տանել մայրենի լեզվի յուրացման ուղիով՝ իմիտացիայի և բազմակի կրկնությունների ճանապարհով>><sup>2</sup>:

Արագ արդյունք ստանալու համար մենք ընտրել ենք ուղիղ մեթոդը, թեպետ երկուսն էլ կարող են որոշակի ընդհանրություններ ունենալ: Մեր հետազոտության մեջ ընդգծել ենք, որ այլալեզու ուսանողներին հայերեն ուսուցանելու ողջ ընթացքում քերականությանն անդրադարձ է կատարվում <<մեջբերումների>> տեսքով. չենք սովորեցնում սահմանումներ, կանոններ, այլ միջնորդ լեզվի օգնությամբ համապատասխան նմուշօրինակների վրա բացատրում և հիշեցնում ենք լեզվաքերականական այս կամ այն օրինաչափությունը կամ շեղումը: Եթե դասընթացի սկզբնական փուլում հայերեն խոսքը հասկանալու և հայերեն խոսք կազմելու համար քերականական գիտելիքներն այնքան էլ համակարգված չէին տրվում՝ առաջնորդվելով որքան արագ, այնքան արդյունավետ սկզբունքով, ապա ուսուցման երկրորդ փուլում խոսքի զարգացմանը նպաստող լեզվաքերականական գիտելիքները համապատասխան նմուշներով ներկայացվում են մասնակիից դեպի ընդհանուր՝ համակարգված և որոշակի հերթականությամբ: Այդ նպատակով <<Սովորում ենք գրել, կարդալ, խոսել հայերեն>> դասագրքում զետեղել ենք <<Քերականություն>> բաժինը, որտեղ ոչ մի կանոն չարտդրված չէ (տե՛ս

---

<sup>2</sup>. Աստվածատրյան Մ., Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա 1985թ., էջ 115:

հավելվածը): Քերականության ուսուցումը դառնում է միջոց՝ հայերեն լեզվամտածողություն ձևավորելու նպատակն իրագործելու համար: Մի կողմից՝ սա անցածի կրկնություն է, մյուս կողմից՝ անցած նյութերի համադրում ու հակադրում, որոնք հիմնավորվում են նմուշօրինակներով: <<Քերականություն>> բաժինը ուսումնասիրելով՝ մասնավորեցվում է նոր նյութը: Ձեռք բերված գիտելիքներն ասես դասավորվում են <<համապատասխան դարակներում>>, և ուսանողների գիտակցականությունը, տրամաբանական մտածողությունը հասցվում են մի նոր մակարդակի: Արդեն իսկ ուսանողի իմացածի վրա ավելացնելով նոր գիտելիք՝ հյուսվում է գիտելիքների այն շղթան, որն անհրաժեշտ է այլալեզու ուսանողին: Աշխատանքները տարվում են պարզից դեպի բարդը, միայն ոչ այնքան բարդ, որ դասընթացը կանոնների սերտամաք վերածվի լեզվագիտական, հայագիտական ուսումնասիրության: Մենք պիտի օգնենք, որ օտարալեզու ուսանողը տիրապետի հայերեն խոսքաշարին:

Ատենախոսության երրորդ գլխում ներկայացվում են տեքստերի ուսումնասիրման մեթոդական շղթան, <<տեքստեր առաջադրանքներով>> կադապարի ուսումնասիրումը, երկխոսությունների ուսուցման մեթոդիկան, մասնագիտական և երկրագիտական տեքստերի ուսումնասիրումը: Տեքստերի ձայնագրության ունկնդրումը օտարալեզու ուսանողների հայերենի դասի կարևորագույն բաղադրիչներից է և շատ արդյունավետ մեթոդ է: Ներկայումս շատ ուսանողներ նախընտրում են ձայնագրել ամբողջ դասը: Լսելու համար նախատեսված դասանյութերի զուգադրմամբ ուղղվում են արտասահմանցի ուսանողների լեզվարտասանական սխալները, հղկվում են թե՛ հնչերանգը, թե՛ բանավոր խոսքի շատ նրբություններ: Բացի տեքստերի ձայնագրություններից՝ մեր կողմից ստեղծվել է նաև մասնագիտական բառապաշարի ուսուցման համար նախատեսված ձայնակավառակ այն ուսանողների համար, ովքեր հաղթահարել են լեզվի ուսուցման նախնական ու առաջին փուլը:

Յուրաքանչյուր դասի ընթացքում որոշակի ժամանակահատված ենք տրամադրում **հարցական նախադասությունների** ուսումնասիրմանը՝ նախապես ուսուցանելով հարցում արտահայտող բառերը՝ հարցական դերանունները: Երկխոսությունների գլխադիր հարցերը ոչ միայն լեզվաբանական արժեք ունեն, այլև տվյալ լեզվական միջավայրի լեզվամտածողության զգացողություն են ստեղծում և ապահովում լեզվի ուսուցման գործնականությունը: Միայն **ո՞վ** և **ինչ** դերանուններով և դրանց հոլովված ձևերով հիսունին մոտ **հարցադրումներ** են սովորում ուսանողները: Օտար միջավայրում ապրող ուսանողների համար սա խիստ անհրաժեշտ դասանյութ է: Հայերենի՝ իբրև օտար լեզվի ուսուցման մեթոդական մեկ ուրիշ հնար է դասագործընթացում ստեղծել տարբեր **իրադրական երկխոսություններ**: Իհարկե, ճիշտ կլինի իրադրությանը համապատասխան երկխոսություններ հյուսել համապատասխան վայրերում, սակայն

գործնականում դա ապահովելը որոշակի դժվարություն է ներկայացնում կապված դասացուցակի, օտար տարածքում ուսանողների վարվելաձևի հետ և այլն: Իրական կյանքում պատահող իրադրությունների **խաղարկումը** շատ ուսանելի է: Այսպես ավելի լավ են մտապահվում թե՛ համապատասխան բառապաշարը, թե՛ հարցական նախադասությունների ձևակերպումը և թե՛ ենթադրվող պատշաճ պատասխանների ուսուցումը, ենթադրենք՝ շուկայում, խանութում, կանգառում, ճաշարանում, գրադարանում, դեղատանը և այլուր:

Արտասահմանցի ուսանողների հետ աշխատելիս կարևորում ենք **միջմշակութային հաղորդակցության** հիմնախնդրի վերլուծությունը: Ուստի արտասահմանցի ուսանողների հայերենի դասաժամերին ուրույն տեղ է հատկացվում հայ ժողովրդի պատմությանն ու մշակույթին վերաբերող թեմաներին: Իրապես անհնար է տիրապետել օտար լեզվին առանց այդ լեզուն կրողի պատմությունն ու մշակույթը ճանաչելու և լեզվական նրբերանգները, լեզվի յուրահատկությունն ու գեղեցկությունը յուրացնելու: Երկրագիտական դասանյութերն օգնում են մեր երկրի նկատմամբ դրական վերաբերմունք ձևավորելուն: Օտարերկրյա ուսանողների ընդգրկվածությունը մեր մշակութային կյանքին, մեր արժեքաավանդույթային բաղադրիչների իրողության ընկալումը և դրանց գիտակցումը կապող օղակ են դառնում մշակութային փոխհարստացման համար: Վերադառնալով իրենց երկիր՝ նրանք տանում են ոչ միայն մասնագիտական և լեզվական գիտելիքներ, այլև սեր ու ջերմություն մեր ժողովրդի ու ազգային արժեքների նկատմամբ:

Դասի արդյունավետության վրա դրական ներգործություն ունեցող հանգամանքներն են՝

1. մայրենի լեզվի կամ բնակավայրի ազդեցությունը,
2. մայրենի կամ առաջին լեզվի իմացության մակարդակը,
3. լեզվագիտական առարկաների հանդեպ ունեցած սերն ու դրանք սովորելու նախանձախնդրություն ունենալու աստիճանը,
4. դասի հիմնական նպատակի՝ լեզվի հաղորդակցական գործառույթի շեշտադրումը,
5. դասանյութի մանրակրկիտ ընտրությունը,
6. դասանյութի և դրան հատկացված ժամանակի ճիշտ բաշխումը,
7. խմբային դասի անցկացումը,
8. դասի կառուցումը ոչ թե գերուժեղ ուսանողների համար, այլ նրանց գիտելիքների օգտագործումը խմբի ընդհանուր մակարդակը վեր հանելու օգտին,
9. տեսական նյութի ուսուցումը նմուշօրինակներով,
10. պատրաստի կաղապարների կիրառում անմիջապես բացատրությունը լսելուց հետո, երբ ուղեղը ոչ միայն տեղեկատվություն է ստանում, այլև վերացարկում է ստացած գիտելիքը,

11. տարբեր տեսակի լեզվաքերականական սխալների ուղղումը և սխալների ուղղման ամրապնդմանը միտված վարժությունների կատարումը,
12. դասերի այնպիսի նախապատրաստում, երբ գերակշռող է ոչ թե մատուցվող նյութի քանակը, այլ երբ ցուցաբերված է ամենից կարևոր նյութերն առանձնացնելու հմտությունը,
13. դասախոսի խոսքի հասանելիության աստիճանը, ձևակերպած մտքերի պարզությունը (որքան լավ ես հասկանում տվյալ նյութը և պատկերացնում նյութի մասերը, այնքան պարզ ես ձևակերպում մտքերդ),
14. միջնորդ լեզվի սահմանափակ օգտագործումը,
15. խոսքային միջավայր ստեղծելը (իրադրական երկխոսություններ, ձայնագրություններ, բեմադրություն և այլն),
16. դասախոս-ուսանող անմիջական փոխազդեցությունը,
17. դիտման մեթոդի կիրառում (համանման քերականական նյութի օրինակների, համապատասխան բառաշարերի ուղղորդումը պատին կամ գրատախտակին),
18. թեմատիկ խոսքաշար կառուցելու համար դիտման մեթոդի կիրառումը (նկարներ, սահիկներ, տեսահոլովակ),
19. ունկնդրման մեթոդի կիրառումը,
20. հայերենը ոչ միայն իբրև հաղորդակցության միջոց, այլև որպես հին քաղաքակրթության մշակութային արժեք ներկայացնելը:

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Դասավանդելով հայերենը՝ իբրև օտար լեզու ԵՊԲՀ-ում, Երևանի Հայքուսակ համալսարանում, <<Լինգվավորում>>, <<Լազարյան դպրատուն>> և <<Ալյանս դե ֆրանսե>> լեզվի կենտրոններում (տե՛ս վավերագրերը հավելվածում) կատարվել է փորձարարական հետազոտություն մեր կողմից ստեղծված մեթոդական համալիրի ներդրման շուրջ՝ այլազգի ուսանողներով համալրված խմբերում հայոց լեզվի՝ իբրև օտար լեզվի ուսուցման արդյունավետությունը հիմնավորելու համար: Կատարվել է նաև այլալեզու ուսանողների առաջադիմության որակական չափանիշների համակարգում, և պարզվել է, որ

ա. ուսանողներն ընդհանուր առմամբ յուրացնում են արևելահայերենին չտիրապետող օտարախոսների խմբերի համար նախատեսված <<Հայոց լեզվի արագացված ուսուցում>> դասընթացի ծրագիրը (պայմանավորված նպաստող հանգամանքներով և անկախ սուբյեկտիվ գործոններից),

բ. այլազգի (հատկապես անգլախոս) ուսանողները հաղթահարում են հայերենի՝ իբրև օտար լեզվի լեզվական արգելքը:

Հայոց լեզվի մեթոդիկայում մեր կողմից դիտարկվել են այլազգի ուսանողներով համալրված խմբերում հայոց լեզվի՝ իբրև օտար լեզվի ուսուցման պրակտիկ հնարավորությունները, որի արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Այլազգի ուսանողներով համալրված խմբերում հայոց լեզվի՝ իբրև օտար լեզվի ուսուցման համար կիրառվել են մեր կողմից մշակված և գիտափորձերով հիմնավորված մեթոդական երաշխավորություններ, և արդյունավետ իրականացվել է առաջադիր հիմնախնդիրը (կարճ ժամանակահատվածում սովորեցնել գրել, կարդալ, նախանշված չափով հաղորդակցվել հայերենով):
2. Մշակվել են ուսուցման յուրաքանչյուր փուլի նպատակներն ու խնդիրները, բարձր արդյունավետության հասնելու ուղիներն ու եղանակները և առաջադիր խնդրի լուծմանը նպաստող մեթոդների դիդակտիկական և տեխնոլոգիական տարատեսակ պարագաներ:
3. Ներկայացվել է հաղորդակցական հմտությունների և խոսքային փոխներգործության կարևորումը միջմշակութային հաղորդակցության և փոխհարստացման գործառույթում:
4. Առաջարկվում է փորձարարության միջոցով ստուգված առաջադիր խնդրի ուսումնական գործունեության արդյունավետությունն ապահովող մեր կողմից մշակված մեթոդական համալիրը ներդնել ուսուցման համակարգում:

Ատենախոսության դրույթների վերաբերյալ հաղորդումներով հանդես ենք եկել՝

- ԵՊԲՀ արտասահմանցի ուսանողների լեզուների ամբիոնում (2005թ. հունիսի 23-ի նիստ),
- <<Օտարերկրացիների ուսուցումը Հայաստանում. հիմնախնդիրներ և լուծումներ>> միջազգային կրթական գիտաժողովում (Երևան, 2007թ.),
- Երևանի Հայթուսակ համալսարանում (2009թ. հունիսի 25-ի ռեկտորատի նիստ),
- Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում (2017թ. հունիսի 7-ի նիստ):

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.**

1. Մուրադյան Լ. Կ., Ուսումնական տեքստեր և առաջադրանքներ, մասնագիտական խոսքի զարգացման համար նախատեսված ձեռնարկ, ԵՊԲՀ, 2006, 92 էջ:
2. Մուրադյան Լ. Կ., <<Օտարերկրացիների ուսուցումը Հայաստանում. հիմնախնդիրներ և լուծումներ>> միջազգային կրթական գիտաժողովի նյութեր, Երևան, 2008, էջ 6:

3. Մուրադյան Լ. Կ., Քերականության ուղեցույց արտասահմանցի ուսանողների համար, ԵՊԲՀ, 2007, 45 էջ:
4. Մուրադյան Լ. Կ., 100 հաղորդակցական վարժություն արտասահմանցի ուսանողների համար, ԵՊԲՀ, 2010, 118 էջ:
5. Մուրադյան Լ. Կ., Սովորում ենք գրել, կարդալ խոսել հայերեն, դասագիրք անգլախոս ուսանողների համար, Էդիթ Պրինտ, Երևան, 2011, 284 էջ:
6. Մուրադյան Լ. Կ., Հայոց լեզվի՝ իբրև օտար լեզվի ուսումնասիրման գիտամեթոդական հիմունքները, <<Գիտական տեղեկագիր>> (№3, 4 - 28,29), ՀՊՄՀ, 2016, էջ 162-169:
7. Մուրադյան Լ. Կ., Երկրագիտական դասանյութերի ուսուցումը այլալեզու ուսանողներով համալրված խմբերում, <<Գիտական տեղեկագիր>> (№4-33), ՀՊՄՀ, 2017, էջ 38-41:
8. Մուրադյան Լ. Կ., Հայոց լեզվի՝ իբրև օտար լեզվի գրաճանաչության կազմակերպման գործընթացը, <<Հայագիտական հանդես>> (№1-35), ՀՊՄՀ, 2017, էջ 137-146:
9. Մուրադյան Լ. Կ., Սովորում ենք գրել, կարդալ խոսել հայերեն, դասագիրք անգլախոս ուսանողների համար, Էդիթ Պրինտ, Երևան, 2018, 258 էջ:
10. Մուրադյան Լ. Կ., Հայերենի ուսուցումը այլալեզու ուսանողներով համալրված խմբերում, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկայի հիմնահարցեր, Երևան,, 2018, էջ 213-226:

**Мурадян Луся Карапетовна**

### **ОСОБЕННОСТИ ИЗУЧЕНИЯ АРМЯНСКОГО КАК ИНОСТРАННОГО ЯЗЫКА В ГРУППАХ ИНОСТРАННЫХ СТУДЕНТОВ**

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 00.02 – “Методика преподавания и воспитания” (армянский язык). Защита диссертации состоится 30 мая 2019 г. в 14:00 на заседании действующего в АГПУ 00.02. Специализированного Совета по педагогике при ВАК.

Адрес: 0010 г. Ереван, улица Тигран Мец 17.

#### **РЕЗЮМЕ**

**Актуальность исследования.** На протяжении последних лет образовательные процессы Республики Армения активно адаптируются к европейским образовательным программам и стандартам, которые основаны на общих целях

и принципах европейского образовательного пространства (на базе Болонского процесса).

Для иностранных (особенно англоязычных) студентов, обучающихся в разных вузах Армении, были разработаны методологическая литература и разные программы обучения армянскому как иностранному языку. Основной проблемой этого учебного процесса является преодоление языкового барьера при общении в армянской среде. Именно поэтому, прежде всего, необходимо иметь систематизированный, базисный учебный план по обучению иностранцев армянскому языку. Актуальность исследования заключается в рассмотрении следующих проблем:

- особенности развития речевой компетенции у студентов при чтении, говорении и письме;
- методика формирования технических навыков чтения и коммуникативного умения, речевого общения на армянском языке;
- формирование способности постепенного перехода к чтению от простых к более сложным текстам;
- особенности формирования письменной речи;
- параллельно с изучением армянского языка предоставление страноведческих знаний об Армении.

**Цель исследования.** - обосновать эффективность внедрения разработанного автором методического комплекса материалов в процессе преподавания армянского как иностранного языка в группах иностранных студентов, а также преимущества использования особенностей этой методики обучения в таких группах.

**Объект исследования** – процесс обучения армянскому языку как иностранному в группах иностранных студентов.

**Предмет исследования** – методика преподавания армянского языка как иностранного в группах иностранных студентов.

**Научная гипотеза исследования.** Внедрение предложенных учебных материалов на основе определенных принципов научного эксперимента, проведенного в обучении армянского как иностранного языка в группах иностранных студентов, позволит успешно решить поставленные профессиональные *задачи* в контексте указанных проблем.

**Задачи исследования:**

- определить цели и задачи каждого учебного этапа, разработку эффективных способов изучения армянского как иностранного языка;
- проанализировать психологические, педагогические и методологические инструменты, которые способствуют повышению эффективности изучения армянского как иностранного языка в группах иностранных студентов;

- разработать общую методологическую, дидактическую и технологическую систему с целью разрешения приоритетных задач;
- апробировать и внедрить в учебный процесс учебно-методический комплекс материалов в соответствии с его методическими рекомендациями и указаниями.

**Научная новизна и теоретическая значимость исследования:**

- Впервые в истории методики преподавания армянского как иностранного языка рассматривается целый ряд практических занятий как система реальных возможностей овладения иностранным языком на основе учебно-методического пособия, предназначенного для групп иностранных студентов.
- Были созданы педагогические, методологические основы инновационных процессов, рациональных связей теории и практики как гарант научно обоснованной и проверенной базы для расширения словарного запаса, развития устной и письменной речи на разных этапах обучения армянскому как иностранному языку в группах иностранных студентов.
- Были представлены лингвистические, педагогические, психологические, методологические инструменты как эффективные способы изучения армянского как иностранного языка в группах иностранных студентов.

**Практическая значимость исследования.** Разработанный и апробированный учебно-методический комплекс материалов, в первую очередь, обеспечит эффективность изучения армянского как иностранного языка в группах иностранных студентов. Он также может быть использован в качестве основы при создании учебно-методических пособий, проведении семинаров и специального курса занятий.

**Структура и объем диссертации.** Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и приложений. Объем диссертации составляет 177 компьютерных страниц. В приложении представлена составленная автором программа занятий «Ускоренное обучение армянскому языку» для иностранцев, не владеющих армянским языком.

К диссертации прилагаются утвержденные со стороны Министерства образования и науки РА авторский труд «Учимся читать, писать и говорить по-армянски» и два учебных пособия с многочисленными таблицами, аудиовизуальными материалами и другими аксессуарами по развитию устной речи иностранных студентов. Эти материалы были апробированы на практических занятиях в группах студентов разных национальностей на кафедре иностранных языков Ереванского государственного медицинского университета (2001-2007 гг.), в лингвистических центрах - «Лингвафорум», «Лазаревская школа», «Альянс де франс» (2007-2017 гг.), а также в Ереванском университете «Айбусак» (2009-2017 гг.), (см. журналы).

## MOORADYAN LUSYA KARAPET

### PARTICULARITIES OF THE ARMENIAN LANGUAGE ACQUISITION IN FOREIGN STUDENT GROUPS

Thesis submitted for the scientific degree of candidate of Pedagogical Sciences, Specialty Field: 00.02. The defense of the dissertation will take place on May 30th, 2019, at 14:00 at the session of Pedagogy Specialized Council 00.02 of HAC in the ASPU.

Address: 0010, Yerevan, str. Tigran Metc 17.

#### SUMMARY

**The relevance of the research:** In recent years the educational processes of the Republic of Armenia have been adapted to European educational programs and standards, based on the common goals and principles of the European educational area.

For foreign (especially English speaking) students studying in different Armenian universities, Armenian has been drawn up as a foreign language study program, methodological literature has been developed to simultaneously study the Armenian language. The primary objective of this important process of education is to overcome the language barrier in the Armenian environment. First of all, it is necessary to elaborate a systematic curriculum for teaching foreigners the Armenian language, including

- a) peculiarities of writing and reading skills;
- b) methods for developing communicating skills in Armenian;
- c) the ability to form skills in reading more sophisticated texts than plain texts,
- d) the peculiarities of the written word formation process;
- e) the possibilities of presenting geographical cognitive knowledge in parallel with the Armenian language study.

The relevance of our research is due to the consideration of these important issues and the content of the processes aimed at their solution.

**The aim of the study:** To substantiate the effectiveness of the introduction of the equipments developed by us in the teaching of Armenian as a foreign language in groups of foreign students, and the advantage of using the teaching peculiarities in foreign student groups.

**The study object** is the process of learning Armenian as a foreign language in groups equipped with foreign students.

**The study subject** is the methodological complex of teaching Armenian as a foreign language in foreign student groups.

**The scientific relevance of research:** If the lessons learned in English as a foreign language are taught in foreign-language groups, we will be able to effectively implement the problem-solving exercises that are based on selected principles and experiments.

**The objectives of the research:**

- To identify the goals and objectives of each learning cycle, develop ways and means that contribute to their efficiency.
- To analyze psychological and pedagogical methodological skills those contribute to the effectiveness of Armenian language as a foreign language in foreign student groups.
- To develop a common methodology, didactic and technological system that promotes the solution of the problem.
- To test and introduce our educational-methodological complex and methodological guidelines accompanying it.

**The research scientific novelty and the theoretical significance of the research:**

- For the first time in the methodology of the Armenian language was created curriculum-textbook-practical studies chain of the Armenian language, as a foreign language in foreign student groups.
- Practically improved and scientifically-based pedagogical-methodological guarantees have been tested in the Armenian language as a foreign language for foreign language students. Have been developed vocabulary, and word development particularities at different stages of study also.
- Have been cultivated linguistic, pedagogical, psychological, methodological, effective ways of teaching Armenian as a foreign language in foreign students groups.

**The practical significance lies is the fact** that there have been developed and tested the teaching and learning methodological complex and the guarantees that provide the effectiveness of the Armenian language as a foreign language in groups of foreign student, which can be used as the basis of the teaching methodological manuals.

**The thesis structure:** The thesis consists of an introduction, three chapters, conclusions, archive materials, list of references and applications. It has 177 computer pages.